ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 16-Լ

«18» 01 2024 թ. գ. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևանի կայազորի զինվորական դատախազ Արթուր Ռոբերտի Անտոնյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու և նրա պարտականությունների կատարումը նույն կայազորի զինվորական դատախազի տեղակալ Վահե Ռաֆաելի Սարգսյանի վրա դնելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 15.01.2024թ. համապատասխանաբար՝ N 56-Ա և N 57-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Ա.Անտոնյանի կողմից՝ Երևանի կայազորի զինվորական դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Վ.Սարգսյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Էլիզբարյան Գրիգոր - Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազ, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

Հանձնախմբի անդամներ՝

Շահումյան Էդգար - Երևանի կայազորի զինվորական դատախազի տեղակալ

Առաքելյան Ռուբեն -	Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետի պաշտոնակատար
Նազարեթյան Արմինե -	Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ
Ղահրամանյան Մարուշ -	Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար
Մանուկյան Լիաննա -	Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ
Մաթևոսյան Մարիամ -	Երևանի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժնի պետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2024 թվականի փետրվարի 10-ը:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**